

Բ Ա Ձ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Պ Դ Ի Ս Ա Ր Ա Ն

ԱՌ

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ս Ի Ի Ր

Չկայ աշխարհիս վրայ ուղղախոհ անձ մը որ չյարգէ զուսումն՝, և չուզենայ զարգարել միտքը և ազնուացընել սիրտը զանազան օգտակար ծանօթութեամբք :

Բայց յայտնի է որ ընտիր ու շատ տեսակ ծանօթութեանց նոյն իսկ չափաւորեալ տեղեկութիւն մը ստանալու համար, կարևոր է բազմաժամանակ կեայ մտադիր ուսումն, հանգերձ անհամար բազմութեամբ գրեանց, զոր սակաւք կ'ընեն և կամ կրնան ընել: Եւ իրացընէ, եթէ 'ի բաց առնուիք զանոնք որ ուսումնական կենաց ընթացք մը բռնած են, այլք մանկական կրթութիւնն աւարտելէն ետև՝ առտնին հոգոց զբաղելով, շարունակ գործոյ հետ կ'ըլլան, և հետևաբար մտաց ամփոփումն չեն ունենար, որով և չեն կրնար մերձենալ իմաստութեան առատարուիս աղբեր: Եւ ահա այս պատճառաւ երբեմն ընկերութիւնը յերկուս դասս կը բաժնուէր, որոց մին պարապէր 'ի գիտութիւնս, և միւսն իր վիճակին պարտոցը կատարման համար չկարենայով մերձենալ իմաստութեան տաճարին, դասապարտեալ էր յընկերութենէ յանտանելի պայման լսելոյ ու չիօսելոյ :

Ընկերութեան այս ցաւալի բաժանման ամբարտակն կործանելու համար, առանց բռնադատելու զըթողուլ այն գործերն որոնք կապուած են իւրաքանչիւրոց ընկերական վիճակին պայմանին հետ, գտաւ մարդկային հնարագիտութիւնը դիւրին միանգամայն և զօրաւոր միջոց մը, որ եթէ 'ի բարին գործածուելու ըլլայ, մարդկային մտաց երևելի և օգտակար գործերէն մէկն կրնայ համարուիլ:

Այս միջոցն պարբերական օրագրաց դիւտն է, յորս կրօնքն ու իմաստասիրութիւնը, գիտութիւնք և գեղարուեստք միանալով իրարու հետ գեղեցիկ հանգուցիւք, վարդապետեն ու քարոզեն, ժողովեն և աւանդեն որ ինչ պիտոյ է և

օգտակար մարդկային կրօնական ու մտաւորական կենաց : Այնպէս զի ընթերցողն առանց գրեանց , առանց վարպետի և առանց ս և է փոքրիկ աշխատանաց՝ կը տեսնայ առաջի աչաց իւրոց գիտութեանց ընդարձակ ասպարէզ մը ու մտաւոր զարգացման անսպառ աղբիւր մը :

Զօրաւոր միջոց մ'է ըսինք օրագրաց գիւտն՝ առ 'ի ընդհանրացուցանել զուսումն , եթէ 'ի թարիւն գործածուելու ըլլան . անանկ որ կրնամք կոչել զնոսա իբրև երկրորդ դաստիարակ մարդկութեան . վասն զի առաջին դաստիարակութիւնն այն է զոր ընդունի իւրաքանչիւր դք 'ի մանկութեան կենդանի ձայնով դաստիարակին , որ է իբրև նախագուռն դաստիարակութեան . իսկ երկրորդն զոր ստանայ իւրաքանչիւր դք յետ ելանելոյ 'ի խնամոց դաստիարակին՝ ընթերցմամբ և առանձին կրթութեամբ , որ լրումն է առաջնոյն և շատ անգամ զօրաւորագոյն քան զնա : Առաջին դաստիարակութեան մէջ դաստիարակն է գործողն , իսկ երկրորդին մէջ այն գիրքն և կամ մանաւանդ այն օրագիրն , զոր ընտրէ իւրաքանչիւր դք իբրև առաջնորդ անձին : Իրաւ է որ զօրաւոր են ողջախոհ գրեանք և կրնան մեծապէս օգտակար ըլլալ մեզի , բայց շատ աւելի ազդեցութիւն ունին մեր մտացը ու սրտին վրայ օրագրի կամ լրագրի մը խօսքը . մինչև յաղթել բազում անգամ նոյն իսկ բանաստեղծին երգերուն , ճարտասանին ձայնին , իմաստասիրին ուղիղ բարոյականին և աստուածաբանին անհերքելի վարդապետութեանցը :

Ինչ է արդեօք օրագրաց այս զօրաւոր ազդեցութեան պատճառը . — վասն զի ժողովրդական գիրք մ'եղած են , և պատրաստ , ազդու կամ թէ ըսեմ ելեկտրական միջոց մ'են առ 'ի ծաւալել զգաղափարս ընդ ամենայն աշխարհ : Կայ արդեօք տեղ մը ուր մուտ չունենան օրագիրք . կը գտնաս յարքունիս թագաւորին և 'ի տաղաւարս տնանկին , 'ի պալատան մեծատան և 'ի կրպակս արհեստաւորին , 'ի վերայ գրասեղանոյ խորագէտ իմաստասիրին , և 'ի ձեռս անմեղ և անենդ պատանւոյն : Մշտատև ու զարմանալի գիրք մ'են . կը մեռանին ու կը ծնանին , և կը նշանակեն իբրև ժամացոյց ժամ առ ժամ բոլոր մարդկային յառաջագիմութեան քայլերը :

Որքեմն եթէ օրագիրք ժողովրդական գիրք մը դարձած են , և մեծ է իրենց ազդեցութիւնը ժողովրդեան վրայ , եթէ 'ի կրօնականին և եթէ 'ի մտաւորականին , ունին վրանին ծանր պարտաւորութիւն մ'առաջի մարդկային ընկերութեան : Խօսածնին չափով և ընտրութեամբ պիտի ըլլայ . պիտի խորչեցնեն հաւասարապէս 'ի կարի համարձակութենէ և 'ի վատ չողմարար մարդահաճութենէ . պիտի ուսուցանեն ատել զախտս ու սիրել զառաքինութիւն , վրէժխնդիր լինել անիրաւին և կանգնել զանիրաւեալն . պիտի աւանդեն զժանօթութիւնս և զգիտութիւնս , և պիտի մատակարարեն միով բանիւ մարդկային ընտանեաց հաց մտաւորական ու կրօնական , որովք միայն կրնան բարեբարել մարդկային ընկերութեան :

Բայց ինչպէս զօրաւոր միջոց մ'են 'ի բարեբարել նոյնպէս և 'ի վնասել : Ազգի մը ճշմարիտ բարին ու զարգացումը կ'ենթադրէ անսխալ գիտութիւն և հաստատուն կրօնք ու բարոյական , առ որ պիտի ազդի ամեն հայրենասէր անձին

նպատակն , որ բանիւ կամ տպագրութեամբ յարատե ջանք մ'ունի բարդաւածել զհայրենիս : Ուստի եթէ օրագիր մը և կամ լրագիր շեղի իւրք իր ազգօգուտ գլխաւոր նպատակէն , այն ատեն փոխանակ օգտակար ըլլալու կ'ըլլայ ֆլասակար : Եւ կը շեղի երբ այն կրօնքն զոր կը քարոզէ՝ խրտեցուցիչ սկզբանց ու վարդապետութեանց վրայ հաստատէ , և կամ թիւր ու ազատամիտ սկզբունքներով խանգարէ ժողովրդոց բարքն , որոց երկու տեսակն ալ հաւասարապէս կ'այլայլեն զբնութիւն մարդոց և արմատախիլ քանցեն 'ի սրտից զամենայն սերմանս բարեպաշտութեան : Եւ ինչպէս կրօնքը՝ նոյնպէս և զիտութիւնը մեծ ու անհամեմատ բարիք մ'է տուեալ մեզ 'ի վերուստ . բայց չէ բարիք եթէ չգործածուի առ 'ի կրթել զմիտս և ազնուացունել զսիրտս : Եւ ցաւալին այն կ'ըլլայ որ այս կերպով աղքին բարւոյն ու յառաջագիմութեան պատրուակաւ , իւրաքանչիւր ոք իր փառասիրութեանը ու շահուցը կը ծառայէ՝ գրգռելով զկիրս ու տաճեցնելով զտարածայնութիւնս , որով ոչ միայն օգտակար չեն ըլլար հայրենեաց , այլ և մեծապէս կը ֆլասան :

Մարդիկ և ամենայն գործք նոցա անհրաժեշտ կարևոր պայման մ'ունին յաշխարհի , այն է բարի կամ չար հետք մը թողուլ ապագայից , որով կամ օրհնութեան և կամ անիծից նոցա լինել արժանաւոր : Եւ ըստ ինքեան սրչափ բարեբախտ է այն անձն և կամ ընկերութիւնը՝ որ բարւոյն լինելով հետամնուտ և 'ի գլուխ տանելով զայն՝ կրնայ թողուլ յետնոց ճշմարիտ պարծանաց յիշատակ մը , որ իր կեանքը մարդկութեան ու հայրենեաց բարւոյն ու յառաջագիմութեանը նուիրեց : Բազմալիակ ալ որ իր նոր Շրջանին Առաջին տարին աւարտելով թեակոխեց յերկրորդն , նոյնպիսի ասպարիզի մը մէջ է . այս ինքն սկզբանէ ուրիշ նպատակ ունեցած չէ՝ բայց եթէ յառաջագիմութիւն բարւոյ հայրենեաց , եթէ կրօնական և եթէ մտաւորական : Ուրեմն կը փափաքի որ 'ի բաց թողով զամենայն տարածայնութիւնս ու զանմիաբանութիւնս որք Լքուցիչք են սրտից և արդելք բարդաւածանաց ու զարգացման որով և պատճառք կործանման ազգաց , ձեռք տանք իրարու ու յառաջագիմեք քաջութեամբ :

